

Ատըմ Շիֆ Ելոյթ Պիտի Ունենայ Պըրպէքնի Յայ Դատի Յանձնախումբի Ճաշկերոյթին

Կիրակի, Մայիս 18ին, կ.ե. ժամը 5ին տեղի պիտի ունենայ Պըրպէքնի Յայ Դատի Յանձնախումբին տարեկան երրորդ ճաշկերոյթը, քաղաքին «Արպաթ» ճաշարանին մէջ (711 S. San Fernando Road), որու ընթացքին տեղի պիտի ունենայ ընկերային ժամ, լուռ աճուրդ, ինչպէս նաեւ Ելոյթ պիտի ունենայ Ներկայացուցիչներու տան անդամ Էտըմ Շիֆը, որ հովանաւորած էր Ներկայացուցիչներու տան Արտաքին յարաբերութեանց յանձնախումբին կողմէ վաւերացուած Յայկական Ցեղասպանութեան ճանաչումը պահանջող թիւ 106 բանաձեւը:

Ձեռնարկին հասոյթը պիտի յատկացուի Յայ Դատի Յանձնախումբին Ուաշինկթընի գրասենեակին, աւելի եւս ամրապնդելու Յայկական Ցեղասպանութեան ճանաչման, ուժեղ Յայաստանի ու ազատ ու անկախ Լեռնային Ղարաբաղի համար գրասենեակին տարած աշխատանքը:

Ձեռնարկին ներկայ պիտի ըլլայ նաեւ Ամերիկայի Յայ Դատի Յանձնախումբին վարիչ-գործավար Արամ Յամբարեան եւ ձեռնարկին պատուոյ նախագահ՝ Քալիֆորնիոյ խորհրդարանի անդամ Փօլ Գրիգորեան:

Ելոյթ պիտի ունենայ նաեւ քոնկրետական Պրետ Շըրմընը, որ նմանապէս նեցուկ կանգնած էր Յայկական Ցեղասպանութեան բանաձեւը վաւերացնելու աշխատանքներուն:

Այս ձեռնարկը սովորաբար կը ներագրաւէ Յայ Դատին հաւատացող մօտաւորապէս 300 համակիրներ:

Յաւելեալ տեղեկութեանց համար այցելել համացանցային www.burbankanc.org կայքը, կամ դիմել Սիլվա Բէշիշեանին (818) 445-0704 ու (818) 562-1918 թիւերով: